ին փուած մի գեղեցիկ գաւառ է, ուր տեղ-տեղ բացւում են առաջդ ընդարձակ տարածութիւններ՝ դաշտեր ու արօտավայրեր երկրագործութեան և անասնապահութեան համար։ Այդ տարածութեան, սարերի փէշերին փուած են Քեարանդի երկու հայաբնակ գիւղերը—Դօվլաթաբադ և Վերին-Քրդեր, որոնք իրենց տեսարաններով և դիրքով ներկայացնում են մի-մի գեղեցիկ պատկերներ։ Բայց առանձնապէս գեղեցիկ են Քեարանդի լեռնաշղթաները, որոնք իրենց դիրքով հմայք են ազդում ճանապարհորդին։

Գաւառն աչքի է ընկնում պարարտ հողերով և ընդարձակ արօտատեղիներով։ Այդտեղ օդը հրաշալի է, ջուրն առատ, որոնց շնորհիւ այդ դաշտը արտադրում է զանազան ծառապտուղներ և ընտիր հացահատիկներ, որից բաւականաչափ արտահանւում է Նոր—Զուղա։

Բնակիչները գաղթած են Հին—Զուղայից 1606 թւին, Շահ-Աբբասի ձեռքով. նրանք իրենց տուն ու տեղով, կենցաղով, ծէսերով, նախապաշարումներով, բարք ու վարքով և նոյնիսկ տարազով ու լեզուով նման են Փէրիայի հայ գիւղացիութեան. ապրում են դեռ նահապետական ձևով և պարապում գլխաւորապէս հողագործութեամբ ու մասամբ էլ անասնապահութեամբ։ Հողը հերկում են արօրով։ Այժմ բաղկացած են 70 անից 550 շնչով, որի 283-ը արական է և 277-ը իգական։ 1916 թւից առաջ նրանց թիւը հասնում էր 152 տան, 1056 շնչով, սակայն պարբերական հարստահարութիւնները և անընդհատ շարունակուող տապալումներն առաջ բերին այն, որ գնալով, գիւղացիութեան թիւն այնտեղ նուազեց։ Եւ այժմ այստեղ գիւղացիութեան տնտեսական դրութիւնը վերին աստիճանի ողբերգական է, ծայր առնող աւազակութիւնների պատճառով։ Մասնաւորապէս ծանր է գիւղացիների պարենաւորման վիճակը։ Գիւղացիութիւնը գտնւում է քաղցի ճիրաններում։ Հաց չկայ, ցորեն չկայ, շատ ընտանիքներ ապրում են բուսեղէնով։ Սոսկալի տպաւորութիւն է թողնում դիտողի վրայ